ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-21/18

ք. Երևան «24» մայիսի 2021թ.

Հայաստանի խաղողագործության եվ գինեգործության հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Զ. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊԸ-ի, ի դեմս Ա. Իվանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա

փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակաևու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 571 500 (հինգ հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում,,բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո

Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ | «ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊԸ |
| ՀՀ. ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5, 0010 | Ք. Երևան, Արշակունյանց պող., 214 |
| «Կոնվերսբանկ» ՓԲԸ | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 1930058282670100 | Հ/Հ 217003023439001 |
| ՀՎՀՀ 00156064 | ՀՎՀՀ 01809336 |
| Գործադիր տնօրեն՝ Զ. Մուրադյան | Տնօրեն՝ Ա. Իվանյան |
| _____ | _____ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 24» մայիսի, 2021թ. կնքված*
*ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-21/18 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի առավելագույն գինը[i] | ընդհանուր գին | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը* |
| 1 | 33691147/1 | Թունանյութեր, Այրոն | Լայն շրջանակի կոնտակտ ազդեցության սնկասպան է: Կիրառվում է մի շարք գյուղատնտեսական և դեկորատիվ մշակաբույսերի վրա՝ կոմպլեքս հիվանդությունների դեմ: Ազդող նյութը՝ պղնձի քլորօքսիդ 140գ/կգ + պղնձի հիդրօքսիդ 140գ/կգ: | կգ | 5 000 | 75 000 | 15 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 15 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 2 | 33691147/2 | Թունանյութեր, Սկաբ Ստոպ (Ստրոբի) | Ստրոբիլուրին-ների խմբի բարձրարդյունավետ սնկասպան է: Կիրառվում է բաց և փակ գրունտի բանջարեղենի, | կգ | 40 000 | 20 000 | 0.5 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 0.5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պտղատուների, խաղողի վազի, դեկորատիվ մշակաբույսերի վրա՝ լայն սպեկտրի հիվանդությունների դեմ: Ազդող նյութը՝ կրեզոքսիմ-մեթիլ 500գ/կգ: | | | | | | | եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 3 | 33691147/3 | Թունանյութեր,Ագաթ (տոպազ) | Տրիազոլների խմբի ներբուսային ազդեցության սնկասպան է:<br><br>Կիրառվում է խաղողի վազի, պտղատու, բանջարանոցային և դեկորատիվ մշակաբույսերի վրա՝ իսկական ալրացողի և այլ հիվանդությունների դեմ:<br><br>Համատեղելիությունը՝ համատեղելի է չեզոք ռեակցիա ունեցող ֆունգիցիդների և ինսեկտիցիդների հետ, սակայն յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ստուգել համատեղելիությունը որոշակի պատրաստուկի | լիտր | 9 000 | 22 500 | 2.5 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 2.5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հետ:Ազդող նյութը՝ պենկոնազոլ 100 գ/լ: | | | | | | | |
| 4 | 33691147/4 | Թունանյութեր,Տրիֆոն (բայլետոն) | Ներբուսային ազդեցության ֆունգիցիդ է: Կիրառվում է հատապտղատուների, բանջարեղենի, խաղողի վազի, և այլ մշակաբույսերի վրա՝ իսկական ալրացողի, մոխրագույն փտման, սեպտորիոզի և այլ սնկային հիվանդությունների դեմ: Ազդող նյութը՝ տրիադիմեֆոն 250գ/կգ: | կգ | 7 000 | 14 000 | 2 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 2 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 5 | 33691147/5 | Թունանյութեր, Հելիոսուիֆր | Սնկասպան և տզասպան պատրաստուկ է: Կիրառվում է որպես ակարոֆունգիցիդ՝ իսկական ալրացողի և տզերի դեմ պայքարի համար: Ազդող նյութը՝ ծծումբ 700 գ/լ + փշատերևների Տերպենային ածանցյալներ): | լ | 3 500 | 52 500 | 15 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 15 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 6 | 33691147/6 | Թունանյութեր, | Ներբուսային ազդեցության, | կգ | 15 000 | 60 000 | 4 | ք. Վաղարշապա | 4 | Պայմանագիրն ուժի մեջ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սումիլեքս | պաշտպանիչ և բուժիչ, բարձրարդյունավետ սնկասպան պատրաստուկ է: Կիրառվում է բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի վազի, պտղահատապտղատու և ծաղկային մշակաբույսերի վրա՝ մոխրագույն և սպիտակ փտումների դեմ: Ազդող նյութը՝ պրոցիմիդոն 500գ/կգ: | | | | | տ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | | մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 7 | 33691147/7 | Թունանյութեր, Շանս Պլյուս (Նուրել-դ) | Ֆոսֆորօրգանական միացությունների և պիրետրոիդներիխմբի միջատասպան է: Կիրառվում է պտղատուների, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի վրա՝ պտղակերների, լվիճների, ցեցի, վահանակրերի, ճակնդեղի սովորական երկարակնճիթի, կոլորադյան բզեզի և այլ վնասատուների դեմ: Համատեղելիությունը՝ անհամատեղելի է | լիտր | 6 500 | 39 000 | 6 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 6 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պղինձ պարունակող պատրաստուկների հետ: Ազդող նյութերը՝ քլորպիրիֆոս 500գ/լ + ցիպերմետրին 50գ/լ: | | | | | | | |
| 8 | 33691147/8 | Թունանյութեր, Պռոլոգեն (կոռազեն) | Անտրանիլդիամիդների խմբի, տրանսլամինար ազդեցության միջատասպան է: Կիրառվում է թեփուկաթևավորների (պտղակեր, ցեց, ողկուզակեր) և կարծրաթևերի (կոլորադյան բզեզ) կարգերի մի շարք վնասատուների դեմ: Ազդում է միջատների զարգացման բոլոր փուլերի վրա: Համատեղելիությունը՝ համատեղելի է ինսեկտիցիդների և ֆունգիցիդների մեծ մասի հետ: Ազդող նյութը՝ քլորանտրանիլիպրոլ 200գ/լ: | լիտր | 35 000 | 35 000 | 1 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 9 | 33691147/9 | Թունանյութեր, Կարատ | Սինթետիկ պիրետրոիդների խմբի միջատասպան է: | լիտր | 5 000 | 15 000 | 3 | ք. Վաղարշապատ, Իսի-լե- | 3 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | (կարատե) | Կիրառվում է կոլորադյան բզեզի, վնասակար կրիայիկների, լվիճների, թրիպսի, երկարակնճիթի, սոցցողների, խաղողի ողկուզակերի, պտղակերի և այլ վնասատուների դեմ՝ կարտոֆիլի, գարու, շաքարի ճակնդեղի, խաղողի վազի, պտղատու և հատապտղատու մշակաբույսերի, անտառային ծառատեսակների վրա:<br><br>Համատեղելիությունը՝ համատեղելի է միջատասպան և սնկասպան պատրաստուկների մեծ մասի հետ:Ազդող նյութը՝ լյամբդա-ցիհալոտրին 50գ/լ: | | | | | Մուլինոյի փող., 1 շենք | | 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 10 | 33691147/10 | Թունանյութեր, Գլիֆոնատ | Սիստեմային, համատարած ազդեցության հերբիցիդ է: Կիրառվում է կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի, հացազգի մշակաբույսերի դաշտերում, անտառային | լիտր | 2 200 | 110 000 | 50 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 50 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տնտեսություններում, խաղողի և պտղատու այգիներում, ոչ գյուղատնտեսական նշանակության հողերում՝ միամյա և բազմամյա հացազգի, ինչպես նաև երկշաքիլավոր մոլախոտերի դեմ: Ազդող նյութը՝ գլիֆոսատ 480 գ/լ: | | | | | | | է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 11 | 33691147/11 | Թունանյութեր, Դոմարկ 10 | Տրիազոլների խմբի, ներբուսային ազդեցության սնկասպան պատրաստուկ է:<br><br>Կիրառվում է խաղողի վազի, պտղատուների, հացազգի մշակաբույսերի վրա՝ իսկական ալրացողի, քոսի, սեպտորիոզի դեմ պայքարում:<br>Համատեղելիությունը՝ համատեղելի է չեզոք ռեակցիա ունեցող ֆունգիցիդների և ինսեկտիցիդների մեծ մասի հետ, սակայն յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ստուգել համատեղելիությունը որոշակի | լիտր | 11 000 | 11 000 | 1 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պատրաստուկի հետ: Ազդող նյութը՝ տետրակոնազոլ 100գ/լ: | | | | | | | |
| 12 | 33691147/12 | Թունանյութեր, Ֆենիքս | Կոնտակտ և ներբուսային ազդեցության սնկասպան պատրաստուկ է: Կիրառվում է խաղողի միլդիուի և անտրակնոզի, կարտոֆիլի ֆիտոֆտորոզի, բանջարանոցային մշակաբույսերի կեղծ ալրացողի և այլ հիվանդությունների դեմ: Համատեղելիությունը՝ համատեղելի է չեզոք ռեակցիա ունեցող ֆունգիցիդների և ինսեկտիցիդների մեծ մասի հետ, սակայն յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ստուգել համատեղելիությունը որոշակի պատրաստուկի հետ: Ազդող նյութերը՝ մանկոցեբ 640գ/կգ + մեֆենոքսամ 40գ/կգ: | կգ | 6 000 | 90 000 | 15 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | 15 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |
| 13 | 33691147/13 | Թունանյութեր, Բանզայ 4 | Ֆոսֆորօրգանական միացությունների խմբի միջատասպան է: | լիտր | 5 500 | 27 500 | 5 | ք. Վաղարշապատ, Իսի-լե- | 5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կիրառվում է պտղատուների, խաղողի վազի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի և այլ մշակաբույսերի վրա՝ պտղակերների, ողկուզակերի, լվիճների, ցեցի, վահանակրերի, մորեխների և այլ վնասատուների դեմ: Համատեղելիությունը՝ համատեղելի է այլ պեստիցիդների հետ՝ բացառությամբ բարձր հիմնային ռեակցիա ունեցողների: Ազդող նյութը՝ քլորպիրիֆոս 480գ/լ: | | | | | Մուլինոյի փող., 1 շենք | | ընթացքում, բացառությամբ եթե մասնակիցը համաձայնվում է կատարել ավելի կարճ ժամկետում |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի խաղողագործության
և գինեգործության հիմնադրամ
ՀՀ. ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5, 0010
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930058282670100
ՀՎՀՀ 00156064
Գործադիր տնօրեն՝ Զ. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյանց պող., 214
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217003023439001
ՀՎՀՀ 01809336
Տնօրեն՝ Ա. Իվանյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 24» մայիսի, 2021թ. կնքված*
*ՀԽԳՀ-ՄԱԱՊՁԲ-21/18 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33691147/1 | Թունանյութեր, Այրոն | - | - | - | - | - | 75 000 | 75 000 | 75 000 | 75 000 | 75 000 | 75 000 | 75 000 | 75 000 |
| 2 | 33691147/2 | Թունանյութեր, Սկաբ Ստոպ (Ստրոբի) | - | - | - | - | - | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 3 | 33691147/3 | Թունանյութեր,Ազաթ (տոպազ) | - | - | - | - | - | 22 500 | 22 500 | 22 500 | 22 500 | 22 500 | 22 500 | 22 500 | 22 500 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 33691147/4 | Թունանյութեր,Տրիֆոն (բայլետոն) | - | - | - | - | - | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 |
| 5 | 33691147/5 | Թունանյութեր, Հելիոսուֆր | - | - | - | - | - | 52 500 | 52 500 | 52 500 | 52 500 | 52 500 | 52 500 | 52 500 | 52 500 |
| 6 | 33691147/6 | Թունանյութեր, Սումիլեքս | - | - | - | - | - | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 |
| 7 | 33691147/7 | Թունանյութեր, Շանս Պլյուս (Նուրել-դ) | - | - | - | - | - | 39 000 | 39 000 | 39 000 | 39 000 | 39 000 | 39 000 | 39 000 | 39 000 |
| 8 | 33691147/8 | Թունանյութեր, Պռոլոգեն (կոռազեն) | - | - | - | - | - | 35 000 | 35 000 | 35 000 | 35 000 | 35 000 | 35 000 | 35 000 | 35 000 |
| 9 | 33691147/9 | Թունանյութեր, Կարատ (կարատե) | - | - | - | - | - | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 10 | 33691147/10 | Թունանյութեր, Գլիֆոնատ | - | - | - | - | - | 110 000 | 110 000 | 110 000 | 110 000 | 110 000 | 110 000 | 110 000 | 110 000 |
| 11 | 33691147/11 | Թունանյութեր, Դոմարկ 10 | - | - | - | - | - | 11 000 | 11 000 | 11 000 | 11 000 | 11 000 | 11 000 | 11 000 | 11 000 |
| 12 | 33691147/12 | Թունանյութեր, Ֆենիքս | - | - | - | - | - | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 33691147/13 | Թունանյութեր, Բանվայ 4 | - | - | - | - | - | 27 500 | 27 500 | 27 500 | 27 500 | 27 500 | 27 500 | 27 500 | 27 500 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
ՀՀ. ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5, 0010
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930058282670100
ՀՎՀՀ 00156064
Գործադիր տնօրեն՝ Զ. Մուրադյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյանց պող., 214
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 2170030234390001
ՀՎՀՀ 01809336
Տնօրեն Ա. Իվանյան

/ստորագրություն/

Կ.Տ